

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ Կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Թիւրքիոյ Տ. Զաւէն Արքեպիսկոպոսի, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս ողջոյն եւ օրհնութիւն Հայրապետական:

Յանցելում 1912 ամի, յետ օրհնութեան Սրբալոյս Միւռոնի, գերապատիւ անդամք Սինոդի ս. Էջմիածնի և Առաջնորդք թեմօրէից Հայոց Ռուսիոյ հրամանաւ Մեր՝ համախմբեցան ի ժողով առ ի խորհել զբարւոք արնտեսութենէ Հայաստանեայց ս. եկեղեցւոյս։ Յութներորդ գումարման իւրեանց, ընդ այլ կարեւոր իրս, անհրաժեշտ համարեալ զընդարձակուն աւուրց պսակադրութեան յընթացս տարւոյս, խնդրեցին ի Մէնջ զտնօրէնութիւն վասն այսր կարեւոր խնդրոյ։ Եւ մեր ոչինչ ման հաւատոյ կամ

դաւանութեան տեսեալ յընդարձակման աւուրց պսակաղրութեան և ըստ ամենայնի հաճ և հաւան գտեալ ընդ այսպիսի միաձայն եզրակացութիւն Տեարց Սինոդականաց և Առաջնորդաց, անհրաժեշտ վարկաք տալ ընթացս խընդրոյս և յ9 մայիսի տարւոյս ընդ համարաւ 748 Կոնդակաւ Մերով յանձն արարաք Ամենապատիւ նախորդ Պատրիարքին Տ. Յովհաննու Արքեպիսկոպոս Արշարունւոյ՝ քննել զայս լուրջ խնդիր ի Կրօնական ժողովի պատրիարքութեանդ ընդ բարձրաստիճան եկեղեցականս Հայոց Կ. Պոլսոյ և զկարծիս և զեզրակացութիւն ժողովոյն առաջի առնել Մեզ։

Խոհականութեամբ քննեալ նոցա զամենայն հանգամանս, ներկայացուցին Մեզ զտեսութիւնս և զեզրակացութիւնս իւրեանց յ7 օգոստոսի տարւոյս ընդ համարաւ 14 գրութեամբ։ Եւ Մեր ի քնին առեալ զամենայն խորհրդածութիւնս Կրօնական ժողովոյ և բարձրաստիճան եկեղեցականաց Հայոց Կ. Պոլսոյ, Սինոդականաց և Առաջնորդաց, այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով կարգադրեմք և պատուիրեմք չկատարել զխորհուրդ պսակի միմիայն ի յետագայ աւուրս.

Ա. Յամենայն կիւրակէս.

Բ. Յամենայն չորեքշաբթիս և յուրբաթս.

Գ. Յաւուրս մեռելոցի հնգից տաղաւարաց.

Դ. Ի տօնս Ծննդեան և Անուանակոչութեան Տեառն, Տեառնընդառաջի, Աւետեաց և Համբարձման.

Ե. Յաւուրս Մեծի պահոց և յառաջին եօթնեկին զատկական աւուրց՝ ի Բարեկենդանէ մինչև ցերկուշաբթի օր Նորոյ կիւրակէի.

Զ. Ի հնգեսին աւուրս շաբաթապահոց Առաջաւորաց, Վարդավառի, Վերափոխման, Խաչվերացի, Յիսնակաց և Ծննդեան։

Ըստ այսմ՝ թոյլատրեմք յետ այսորիկ կատարել զպսակս ի հետագայ աւուրս, ի բաց առեալ զվերոյիշեալ արգելեալ աւուրս.

Ա. Յութերեկս տօնի Սատուածայայտնութեան, յ8-էն յանուարի ց12.

Բ. Ի 14-էն յունուարի ցԲարեկենդան Առաջաւորաց պահոց.

Գ. Ի շաբաթ օրէ Առաջաւորաց ցԲուն Բարեկենդան.

Դ. Յաւուրս Յինանց, սկսեալ ԻՆոր-Կիւրակէէն ցԲարեկենդան Վարդավառի.

Ե. Յերեքշաբթի օրէ զկնի Վարդավառին ցԲարեկենդան Վերափոխման ս. Աստուածածնի.

Զ. Յերեքշաբթի օրէ զկնի Վերափոխման ցԲարեկենդան Խաչվերացի.

Է. Յերեքշաբթի օրէ զկնի Խաչվերացին ցԲարեկենդան պահոց Յիսնակի.

Ը. Յերկուշաբթի օրէ զկնի Յիսնակին ցԲարեկենդան պահոց ս. Ծննդեան.

Համարելով զսկիզբն եկեղեցական աւուր զկնի երեկոյեան ժամերգութեան, ի կիւրակէ և յայլ արգելեալ աւուրս, զկնի երեկոյեան ժամերգութեան, մարթ է դնել պասակ, յորժամ հեռանի օր ներելի վասն պասակի։

Արդ՝ յանձն առնեմք և առաջադրեմք Ամենապատուութեան Ձերում և Կրօնական Ժողովոյ՝ փութով առնել զշրջաբերական կարգադրութիւնս ըստ մտաց Կոնդակիս յանուն Առաջնորդաց, պատուիրելով ամենեցուն յետ այսորիկ ընթանալ համաձայն Հայրապետական կարգադրութեանս։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և օրհնեալ ի մէնջ. Ամէն։

Ի 26 Հոկտեմբերի 1913 ամի
ըստ Տօմարիս ՌՅԿԲ
Ի Հայրապետութեան Մերում Բ. ամի
Ի Վաղարշապատ
թ. 1656

Ի նոյն միտս Սինոդի ս. Էջմիածնի և ամենայն Առաջնորդաց Հայոց Ռուսաստանի, Պարսկաստանի, Եւրոպիոյ և Ամերիկայի, թ. թ. 1657—1667.